

- 61 Այս ինչ եւ եւս յոգնապատկէր
 Զերկիւղ, կասկած, հեռն անվաւեր,
 Զոր յինքն Յակոբ յար դարմանէր
 Ընդդէմ Սարգսի զոր դաղտ ատէր:
- 62 Ով սրտութեան սերման չարի
 Զոր Սահակայն բան անտեղի
 Յանէր ի սիրտ Նայեան պետի
 Որպէս յըմբոն պատրաստ անդի:
- 63 Ուր այն ահա արմատացեալ
 Վերերեւէր շառաւիղեալ,
 Որ յետ փոքու տեսցի ծաղկեալ
 Եւ դառն պտղով բեղմնաւորեալ:
- 64 Այլ որպէս դէպ լինի յաճախ
 Այնմ որ ի մռայլ նաւէ խաղաղ,
 Յոր թէպէտ ծովն հայի ծիծաղ,
 Այլ մէզն այնմիկ լսատէ այս ձախ:
- 65 Այսպէս բազմաց սէրն յայտական
 Թէպէտ Սարգսի առթէր բախճան
 Իսկ խեթն ոմանց որ ի մթնան
 Պատրաստէր միշտ նրմա վըզեան:
- 66 Եւ արդ իբրու ի միւս ամին
 Սահակ բաբունն որ ահագին
 Եկրն անդրէն յոյժ զայրագին
 Յընկճել զՍարգիս ըստ իւր բանին:
- 67 Քանզի յաւուր միում յայտնի
 Յըզմիւռնիայ յիւրում յարկի
 Մինչ բարկացեալ էր նա կարի
 Ասացեալ էր զայս բան Սարգսի: